Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Youthpass

YOUTHPASS ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Եվրոպական երիտասարդական ոլորտում ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման ճանաչման ու վավերացման ռազմավարություն

EUROPEAN SOLIDARITY CORPS

Erasmus+
Enriching lives, opening minds.

SALTO TRAINING & COOPERATION

Լրացուցիչ նյութեր Youthpass-ի վերաբերյալ կարելի է գտնել հետևյալ կայքում՝ → www.youthpass.eu

Բովանդակություն

1	Ներածություն	5
2	Քաղաքականության համատեքստ	8
3	Youthpass ռազմավարության տեսլականը, նպատակներն ու խնդիրները	10
4	Youthpass-ի վերաբերյալ առկա որոշ պատկերացումներ	12
5	Youthpass-ի դերն ու բնույթը 2027 թվականին	14
6	Գործողության դաշտեր	16
7	Youthpass-ի հետագա զարգացումը որպես ճանաչման գործիքի	25
8	Ռազմավարության թիրախային խմբերը	28
9	Ռազմավարության իրականացման գործիքները	30
10	Իրականացնող դերակատարներ	32
11	Կառավարում	34
12	Մշտադիտարկում, գնահատում և հետազոտություն	36
13	Ռազմավարության մշակում և երախտիքներ	39

Youthpass

1 Ներածություն

Youthpass ռազմավարությունը հրապարակվել է 2021 թվականին: Այդ ժամանակ եվրոպական երիտասարդական աշխատանքի համայնքը կանգնած էր ԵՄ երիտասարդական նոր սերնդի ծրագրերի մեկնարկի շեմին, որոնք երիտասարդների և երիտասարդական աշխատողների համար բացում էին ավելի բազմազան և ընդլայնված հնարավորություններ՝ սովորելու և նախաձեռնություններ իրականացնելու համար: Այն համընկնում է նաև Եվրոպական երիտասարդական աշխատանքի օրակարգի և Բոնnի գործընթացի մեկնարկի հետ, որոնք հանդիսանում են եվրոպական երիտասարդական աշխատանքի համայնքի համակարգված նախաձեռնություն՝ ուղղված երիտասարդական աշխատանքի որակի ամրապնդմանը, ճանաչելիության բարձրացմանը և նորարարության զարգացմանը:: Եվ ահա 2021 թվականին մեր, ինչպես և ամբողջ հասարակության վրա, խիստ ազդում է Covid-19 համաճարակը: Բացի վերը նշվածից, վերջին մի քանի տարիների ընթացքում հասարակությունը, ինչպես և երիտասարդական աշխատանքին, կամավորությանը, կրթությանը և աշխատանքի աշխարհին վերաբերող թեմաներն արագորեն զարգանում էին: Սակայն համաճարակն արագացրեց այս գործընթացներից շատերը և նույնիսկ որոշ չափով սասանեց երիտասարդական աշխատանքի, կամավորության և այս ոլորտներում եվրոպական համագործակցության հիմքերն ու պայմանները:

Այս աստիճանաբար բարդացող և արագ փոփոխվող ժամանակներն ուշադրությունը սևեռում են կարողությունների կարևորության և այն միջավայրերի վրա, որոնցում դրանք մշակվում են: Կարևոր է բարձրացնել ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արժեքի տեսանելիությունը երիտասարդական աշխատանքի և կամավորության ոլորտում: Մենք պետք է ապահովենք, որ երիտասարդական ոլորտում ներգրավված անձինք հասկանան իրենց փորձի կրթական արժեքը, և որ այս կրթական արժեքը կապակցվի եվրոպական, ազգային և տարածաշրջանային մակարդակների այլ գործընթացների հետ, որոնք խթանում են անհատների կարողությունների տեսանելիությունն ու կիրառելիությունը՝ անկախ այն բանից, թե որտեղ են դրանք մշակվել: Եվրոպական երկրների մեծ մասում գործում են ոչ ֆորմալ և ինֆորմալ համատեքստերում ձեռք բերված ուսուցումը վավերացնելու համակարգեր:[1] Այնուամենայնիվ, միշտ չէ, որ երիտասարդների աշխատանքի համատեքստում զարգացած կարողությունների համապատասխանությունը նման վավերացման համակարգերին ակնհայտ է:

Հաշվի առնելով վերոնշյալը, նման վայրիվերումների ժամանակները մեզանից պահանջում են այսօրվա աշխարհում անհրաժեշտ կարողությունների, հատկապես սովորելու կարողության վերանայում: Այս կարողությունն առանցքային է կարողությունների շարունակական զարգացման համար և դյուրացնում է դրանց փոխանցումը տարբեր համատեքստերում, ինչը հատկապես կարևոր է արագ փոփոխվող աշխարհում:[2] Սովորել՝ ինչպես սովորելը էլ ավելի մեծ նշանակություն է ձեռք բերել համաճարակի ֆոնին՝ ավանդական ուսուցման միջավայրի և ուսուցման աջակցման հետ կապված մարտահրավերների ու սեփական ուսուցումը կառավարելու ունակության ավելի մեծ անհրաժեշտության համատեքստում:

Youthpass-ը հավաստագիր է և կրթական մոտեցում, որն օգնում է երիտասարդներին և երիտասարդական աշխատողներին, ովքեր մասնակցում են ԵՄ երիտասարդական ծրագրերին, ավելի իրազեկ դառնալ իրենց ուսուցման մասին և զարգացնել սովորելու իրենց կարողությունը: Այն ճանաչման ու վավերացման գործիք է, որն օգնում է մասնակիցներին փաստաթղթավորել իրենց ձեռք բերած կարողությունները և հետագայում ներկայացնել դրանք համապատասխան համատեքստերում: Անհատական աջակցման և զարգացման վրա իր շեշտադրմամբ՝ այն հարմարեցված է երիտասարդական աշխատանքին և կամավորական համատեքստերին: Որպես այդպիսին, Youthpass-ը նպաստում է հասարակության ներկա մարտահրավերների լուծմանն ավելի լայն իմաստով, ինչպես նաև երիտասարդական աշխատանքի զարգացման հիմքում ընկած քաղաքականության գործընթացներին ու ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման վավերացմանը: Այն ունի ներուժ՝ խրախուսելու ավելի մեծ սիներգիաներ և խթանելու ջանքեր՝ երիտասարդական աշխատանքի ուսումնական հարթությունն ամրապնդելու համար:

[1] Commission Staff Working Document. → Evaluation of the Council Recommendation of 20 December 2012 on the Validation of Non-formal and Informal Learning.

[2] European Commission (2020) → LifeComp. The European Framework for Personal, Social and Learning to Learn Key Competence.

Youthpass ռազմավարությունը նկարագրում է, թե ինչպես Youthpass-ը կարող է պահպանել և ամրապնդել իր արժեքը՝ հաշվի առնելով իր թիրախային խմբերի և Եվրոպական միության երիտասարդական ծրագրերի փոփոխվող կարիքներն ու համատեքստերը 2021-2027 թվականների համար: Ավելին, այն նպաստում է Եվրոպայում երիտասարդական աշխատանքի ու ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման որակն ու ազդեցությունը բարելավելու քաղաքականության գործընթացների իրականացմանը:

Այս ռազմավարական փաստաթղթի նպատակն է հիմք ծառայել ՍԱԼՏՈ վերապատրաստման և համագործակցության ռեսուրսային կենտրոնի համար՝ Եվրոպական հանձնաժողովի և ԵՄ երիտասարդական ծրագրերի ազգային գործակալությունների հետ միասին Youthpass-ի մշակմանն ուղղված աշխատանքների մասով: Այն նաև ձգտում է ոգեշնչել և առաջնորդել այլ կազմակերպություններին և շահագրգիռ կողմերին, որոնք ցանկանում են ավելի մեծ իրազեկվածություն և տեսանելիություն ապահովել երիտասարդական աշխատանքի և կամավորության ուսումնական արժեքի վերաբերյալ ամբողջ Եվրոպայում:

2 Քաղաքականության համատեքստ

Youthpass ռազմավարությունը բխում է հետևյալ քաղաքականության համատեքստից.

- ԵՄ Երիտասարդության 2019-2023 թվականների ռազմավարությունը խթանում է երիտասարդական աշխատանքի միջոցով ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման ավելի մեծ ճանաչումը, ինչպես նաև որակյալ գործիքների ավելի համակարգված օգտագործումը և հետագա զարգացումը:

- Youthpass ռազմավարության նպատակն է նպաստել Եվրոպական երիտասարդական աշխատանքի օրակարգի իրականացմանը , որը ռազմավարական շրջանակ է Եվրոպայում երիտասարդական աշխատանքի նորարարության, որակի և ճանաչման համար: Օրակարգը, որը պետք է իրականացվի Բոնի գործընթացի միջոցով, կոչված է հետագայում մշակելու ռազմավարություններ և գործողություններ, որոնք թույլ կտան ճանաչել ու վավերացնել երիտասարդական աշխատանքի ոլորտում ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցումը, ինչպես նաև ճանաչել երիտասարդական աշխատանքի ներդրումը երիտասարդների հզորացման գործում:

- Երիտասարդական աշխատողների կրթության և վերապատրաստման վերաբերյալ Խորհրդի եզրակացությունները (2019թ.) ընդգծում են երիտասարդական աշխատողների

[3] Resolution of the Council of the European Union and the Representatives of the Governments of the Member States meeting within the Council on a framework for European cooperation in the youth field:
→ The European Union Youth Strategy 2019-2027.

[4] Resolution of the Council and of the Representatives of the Governments of the Member States meeting within the Council on the Framework for
→ Establishing a European Youth Work Agenda.

[5] Conclusions of the Council and of the Representatives of the Governments of the Member States meeting within the Council on
→ Education and training of youth workers.

կարողությունների բազմազանությունը ճանաչելու անհրաժեշտությունը և հորդորում անդամ պետություններին ու Հանձնաժողովին ամրապնդել երիտասարդական աշխատանքում ոչ ֆորմալ ուսուցման ճանաչումը:

- Ռազմավարությունը կապված է Եվրոպական հմտությունների օրակարգի հետ՝ ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման վավերացման վերաբերյալ 2012 թվականի դեկտեմբերի 20-ի Խորհրդի հանձնարարականի գնահատման միջոցով: Գնահատումն առաջարկում է, ի թիվս այլ միջոցների, բարելավել ուղեցույցը, որպեսզի վավերացման գործընթացում ամրապնդվի եվրոպական թափանցիկության այնպիսի գործիքների դերը, ինչպիսիք են Europass-ը և Youthpass-ը:[7]

- Երիտասարդական աշխատանքի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի հանձնարարականն[8] անդամ պետություններին հորդորում է խթանել արժեքների, մոտեցումների, հմտությունների, գիտելիքների և քննադատական ըմբռնման ճանաչումը, որը ձևավորվել է երիտասարդական աշխատանքին մասնակցելու և դրա իրականացման միջոցով, և մեծ աջակցություն ցուցաբերել ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման ճանաչման մասով առկա և հետագա եվրոպական շրջանակներին և օրակարգերին:

Youthpass-ը Եվրոպական միության երիտասարդական ծրագրերի մաս է, որակային միջոց, որն օգնում է բարձրացնել այս ծրագրերին մասնակցության ուսումնական ազդեցությունը: Էրազմուս+ և Եվրոպական համերաշխության կորպուսի 2021-2027 թվականների ծրագրերի իրավական շրջանակում Youthpass-ը նշվում է որպես Միության այնպիսի գործիք և միջոց, որը խթանում է ծրագրերի որակն ու բարձրացնում կարողությունների զարգացման ճանաչումը ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման համատեքստում:[9/10] Այն իրականացնում է ցկյանս ուսուցման առանցքային կարողությունների ԵՄ շրջանակը (2018թ.)[11] և այդպիսով միանում Եվրոպական կրթական տարածքին:[12]

[6] COUNCIL RECOMMENDATION of 20 December 2012 on the
→ Validation of non-formal and informal learning.

[7] European Commission (2020).
→ Study supporting the evaluation of the Council Recommendation of 20 December 2012 on the validation of non-formal and informal learning.

[8] Recommendation CM/Rec(2017)
→ 4 of the Committee of Ministers to member States on youth work.

[9] Regulation (EU) 2021/817 of the European Parliament and of the Council of 20 May 2021 establishing
→ Erasmus+: the Union Programme for education and training, youth and sport.

[10] Regulation (EU) 2021/888 of the European Parliament and of the Council of 20 May 2021 establishing
→ The European Solidarity Corps Programme.

[11] COUNCIL RECOMMENDATION of 22 May 2018 on
→ Key competences for lifelong learning.

[12] European Education Area.

3

Youthpass ռազմավարության տեսլականը, նպատակներն ու խնդիրները

Youthpass ռազմավարության հիմքում ընկած տեսլականն է հասնել երիտասարդական դաշտի ուսումնական արժեքի, ինչպես նաև երիտասարդական ոլորտում ներգրավվածության միջոցով զարգացած կարողությունների լայն տեսանելիությանը և ընկալմանը:

Ռազմավարության նպատակն է աջակցել երիտասարդներին և երիտասարդական աշխատողներին՝ եվրոպական երիտասարդական համատեքստում ուսուցման ավելի մեծ ճանաչման միջոցով: Այն ձգտում է խթանել և նպաստել այս ոլորտում ուսումնական արդյունքների, մասնավորապես՝ Էրազմուս+ և Եվրոպական համերաշխության կորպուսի ծրագրերի շրջանակներում ձեռք բերված արդյունքների ճանաչմանը:

Նպատակ 1.

Ամրապնդել ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման ճանաչումը և վավերացումը Youthpass-ի միջոցով՝ որպես ԵՄ երիտասարդական ծրագրերի որակի հատկանիշ:

Նպատակ 2.

Սահմանել Youthpass-ի հետագա զարգացման ուղղությունը՝ ԵՄ երիտասարդական ծրագրերի շրջանակներում ուսուցման ճանաչումը խթանելու, երիտասարդների և երիտասարդական աշխատողների զարգացող կարիքներին արձագանքելու և **դրա որակյալ իրականացմանը նպաստող միջոցառումները նախանշելու համար:**

Նպատակ 3.

Ամրապնդել **երիտասարդական աշխատանքի ուսումնական արժեքի տեսանելիությունը և ճանաչումը**՝ հաշվի առնելով երիտասարդական աշխատանքում տեղի ունեցող ուսուցման ամբողջ սպեկտրը (երիտասարդների և սովորող համարվող երիտասարդական աշխատողների հետ՝ ներառյալ ճանաչման բոլոր հարթությունները և հաշվի առնելով վավերացման տարբեր փուլերը):

Նպատակ 4.

Youthpass-ով ձեռք բերված փորձի միջոցով տեղեկացնել **համապատասխան քաղաքականության գործընթացները,** աջակցել **երիտասարդական (աշխատանքային) քաղաքականության մշակմանը եվրոպական և անդամ պետությունների մակարդակով ու համակարգային ջանքեր գործադրել** ուսուցման ճանաչումն ու վավերացումը խթանելու համար:

4

Youthpass-ի վերաբերյալ առկա որոշ պատկերացումներ

Youthpass-ը եվրոպական ճանաչման գործիք է՝ բացահայտելու և փաստաթղթավորելու համար այն ուսուցման արդյունքները, որոնք ձեռք են բերվում Էրազմուս+ և Եվրոպական համերաշխության կորպուսի ծրագրերի շրջանակներում: Youthpass-ը նպաստում է ուսուցման վերաբերյալ անհատական մտորմանն ու իրազեկմանը և օգնում ուսուցման արդյունքները տեսանելի դարձնել ինչպես սովորողների, այնպես էլ մյուսների համար: Դրա նպատակն է նպաստել մտորման պրակտիկային երիտասարդական աշխատանքի և համերաշխության ծրագրերում՝ դրանով իսկ բարձրացնելով դրանց որակն ու ճանաչումը: Այն նաև աջակցում է երիտասարդներին և երիտասարդական աշխատողներին իրենց հետագա ճանապարհում և բարձրացնում եվրոպական ներգրավվածության արժեքի տեսանելիությունը:

2007 թվականին թողարկվելուց ի **վեր և մինչև 2021 թվականի հունիսը Youthpass-ի հավաստագրեր են շնորհվել ավելի քան 1.1 միլիոն անգամ:** Ստեղծման օրվանից Youthpass-ը հասանելի է եղել ԵՄ «Երիտասարդները գործելիս» և Էրազմուս+ երիտասարդական ծրագրերի մասնակիցների համար, իսկ 2019 թվականին այն ընդլայնվել է՝ ներառելով նոր գործարկված Եվրոպական համերաշխության կորպուսը: Youthpass-ի հավաստագիրը կանխորոշված այնպիսի գործընթացի մաս է, որն օգնում է ներառել ուսուցումն օրակարգում ու մտորել ուսուցման գործընթացի և արդյունքներ վերաբերյալ: Այն կամընտիր գործիք է, որը հասանելի է այս ծրագրերի բոլոր մասնակիցներին՝ ինչպես երիտասարդներին, այնպես էլ երիտասարդական աշխատողներին:

2013 թվականի Youthpass ազդեցության վերաբերյալ ուսումնասիրությունը[13] ցույց տվեց, որ **Youthpass-ի հիմնական արժեքն է աջակցվող ծրագրերում ուսուցման նկատմամբ ուշադրության մեծացումը և մասնակիցների՝ այդպիսի ուսուցման** և իրենց անձնական ուսուցման գործընթացի արդյունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացումը: Էրազմուս+ երիտասարդական ծրագրերի 2020 թվականի RAY (Հետազոտության վրա հիմնված վերլուծություն և մշտադիտարկում) մշտադիտական հետազոտությունը[14] հաստատեց, որ Youthpass-ի համատեքստում ուսուցման և ինքնագնահատման վերաբերյալ մտորումն օգնում է բարձրացնել մասնակիցների իրազեկվածությունն իրենց զարգացման վերաբերյալ: Հետազոտության համաձայն՝ Youthpass ունեցողների մեծ մասը, ովքեր օգտագործել են Youthpass-ն աշխատանքի, պրակտիկայի դիմելիս կամ հետագա ուսումնասիրությունների ժամանակ, հայտարարել են, որ այն օգտակար է եղել այդ հարցում: Հետևաբար, այն ծրագրերում, որտեղ իրականացվել են Youthpass-ը և մտորումը, այն համարվում է արժեքավոր գործիք, որն օգնում է բարձրացնել ծրագրերի որակն ու ազդեցությունը մասնակիցների՝ իրենց կողմից նոր ձեռք բերած կարողությունների և դրանք նկարագրելու ուժեղացված կարողությունների միջոցով:

[13] Kloosterman, P., Taru, M., (2013)
→ Youthpass Impact Study. Young people's personal development and employability and the recognition of youth work.

[14] Böhler, J., et al, (2020).
→ Research Report. RAY-MON. Effect and outcomes of the Erasmus+ Youth in Action programme. Transnational Analysis.

5

Youthpass-ի դերն ու բնույթը 2027 թվականին

Հետևյալ հիմնաբառերը նկարագրում են, թե ինչպես ենք մենք պատկերացնում Youthpass-ի հայեցակարգը 2027 թվականին:

Ընդհանուր.

Youthpass-ի հայեցակարգը պետք է շարունակի ներառել հետևյալ երեք լայն տարրերը՝ ճանաչման գործիք, գործընթաց և ռազմավարական գործողություն, որոնցից յուրաքանչյուրն աջակցում է մյուսներին: Դրանք բոլորը պետք է շարունակեն ուժեղացվել և զարգացվել:

Շրջանակ ստեղծող.

Youthpass-ի՝ որպես ռազմավարական շրջանակի հետ աշխատանքը կլինի հեռանկարային և հստակորեն կապված այն քաղաքականության գործընթացների հետ, որոնք նպաստում են եվրոպական երիտասարդական աշխատանքի զարգացմանը: Այն աջակցող դեր կխաղա սիներգիաներ ստեղծելու և շահագրգիռ կողմերին ու նախաձեռնությունները կապելու գործում, որոնք իրենց հերթին նպաստում են ճանաչմանը և վավերացմանը, ինչպես նաև գործնական համայնքում կարողությունների ձևավորմանը:

Հայեցակարգային.

Youthpass-ը մեծ դեր կունենա երիտասարդական ոլորտում ուսուցման հետազոտման, հայեցակարգման և ընդգծման գործում իր ողջ բազմազանությամբ: Youthpass-ի շուրջ աշխատանքը կներառի բանավեճերի խթանում և երիտասարդական աշխատանքում ուսուցման վերաբերյալ փաստացի տվյալների հավաքում: Բացի ոչ ֆորմալ ուսուցումից, Youthpass-ի հետ հայեցակարգային աշխատանքը կներառի ինֆորմալ ուսուցման դերի ուժեղացում և երիտասարդական աշխատանքում դրա ճանաչում:

Ապացույցների վրա հիմնված.

Youthpass-ի ռազմավարության և գործիքի իրականացման մշտադիտարկման և գնահատման մեխանիզմները կապահովեն, որ երկուսն էլ համապատասխանեն թիրախային խմբերի կարիքներին և հարմարեցվեն բոլոր ծագող կարիքներին:

Թիրախային.

Youthpass-ի լուծումները հնարավորինս կբավարարեն դրա թիրախային խմբերի և համատեքստերի հատուկ կարիքները: Սա կներառի տեղեկատվության և ուղղորդման մասով հնարավոր պահանջների դիտարկում, ինչպես նաև երիտասարդական ծրագրերի ձևաչափերին համապատասխանում: Պետք է նաև ապահովվի Youthpass-ի համապատասխանությունը երիտասարդական աշխատանքի մասնագետների մեծ խմբի ճանաչման անհրաժեշտությանը:

Ոգեշնչող.

Youthpass-ի հայեցակարգը, գործիքը և սկզբունքները կարող են ծառայել որպես մոդել և ոգեշնչում երիտասարդական ոլորտում հետագա ճանաչման մասով գործունեության համար: Այն կարող է ոգեշնչել բանավեճեր երիտասարդական աշխատանքի և կամավորության ոլորտում ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման ճանաչման ու վավերացման վերաբերյալ՝ ազգային մակարդակում ճանաչման/վավերացման շրջանակների մշակման, ինչպես նաև երիտասարդական աշխատանքի որակի ապահովման և դրա շրջանակներում ռեռի ունեցող ուսուցման փաստաթղթավորման համար:

Համագործակցության վրա հիմնված.

Youthpass-ի իրականացումը և ճանաչման ռազմավարական միջոցների մշակումը հիմնված են բոլոր համապատասխան շահագրգիռ կողմերի ներգրավման և վերջիններիս հետ երկխոսության վրա՝ շեշտը դնելով Եվրոպայում երիտասարդական քաղաքականության կառուցման միջոլորտային հիմքի վրա:

Սահմանված.

Տեղեկատվությունը և հաղորդակցությունը կապահովեն ուսուցման դերի և Youthpass-ի արժեքի մասին լայն տեղեկացվածություն և դրանց պատշաճ ընկալում: Youthpass գործիքի հայեցակարգային, որակական և քանակական զարգացումը, ինչպես նաև ուժեղացված ուղղորդումը կհանգեցնեն տարբեր երկրներում գործիքների հավասարակշռված իրականացման՝ միջոցառումների տարբեր տեսակների և թիրախային խմբերի միջոցով:



6 Գործողությունների ոլորտները.

Youthpass ռազմավարությունն առաջարկում է գործողությունների հետևյալ երեք ոլորտները: Դրանք նկարագրում են այն միջոցները, որոնք անհրաժեշտ են այս ռազմավարության նպատակներն ու խնդիրներն իրականացնելու համար՝ միաժամանակ օգնելով ձևավորել Youthpass-ի առանձնահատկություններն ու դերը 2027 թվականին, ինչպես նկարագրված է վերը բերված բաժնում:



1

Youthpass-ի իրականացում և հետագա զարգացում.

Դարձնել Youthpass-ը միության թափանցիկության գործիք, որը նպաստում և դյուրացնում է ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների նույնականացումն ու փաստաթղթավորումը «Էրազմուս+ Երիտասարդություն» և Եվրոպական համերաշխության կորպուսի բոլոր ծրագրերում:

2

Ուսուցում և ճանաչում.

Զարգացնել ուսուցման և ճանաչման ներուժը երիտասարդական ոլորտում ու երիտասարդական աշխատանքային կազմակերպությունների միջոցով: Սա կոգեշնչի նորարարական գործողություններ՝ այդ աշխատանքի ազդեցությունն ու որակը բարձրացնելու համար:

3

Քաղաքականության աջակցություն.:

Տեղեկացնել և աջակցել երիտասարդական ոլորտում ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման ճանաչման ու վավերացման համակարգերի և քաղաքականության մշակմանը և իրականացմանը, ինչպես նաև հնարավորություններ ստեղծել հասակակիցների ուսուցման և համակարգային լուծումների փոխանակման համար, որոնք բարձրացնում են երիտասարդական աշխատանքի ուսուցման արժեքը Եվրոպայում:

Նշում գործողությունների երեք ոլորտների միջև փոխհարաբերությունների վերաբերյալ. **առաջին ոլորտը**՝ ՝ «Youthpass»-ի իրականացում և զարգացում, կազմում է ռազմավարության առանցքը: **Երկրորդը** կիրառում է Youthpass-ը՝ որպես երիտասարդական ոլորտում ուսուցման ամրապնդման օգտակար մոդել և նպատակ ունի բարելավելու դրա որակը: Որպես այդպիսին, այն համարվում է այս ռազմավարության երկրորդ առաջնահերթությունը: **Երրորդ ոլորտը**, որի նպատակն է տեղեկացնել և աջակցել համակարգերին և քաղաքականությանը, կարևոր է քաղաքականության և գործնականի միջև փոխօգտակար կապ ստեղծելու համար և համարվում է երրորդ առաջնահերթությունը: Բոլոր երեք ոլորտները համալրում և ամրապնդում են մեկը մյուսին՝ ինչպես գործողության բոլոր ոլորտները, այնպես էլ դրանցում իրականացվող հատուկ միջոցները:

1

Գործողությունների ոլորտ 1.

Youthpass-ի իրականացում և հետագա զարգացում

Գործողությունների այս ոլորտը միավորում է այն միջոցները, որոնք անհրաժեշտ են Youthpass-ը որպես Միության թափանցիկության գործիք իրականացնելու և զարգացնելու, ինչպես նաև «Էրազմուս+ Երիտասարդություն» և Եվրոպական համերաշխության կորպուսի բոլոր ծրագրերում ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների բացահայտումն ու փաստաթղթավորումը խթանելու և դյուրացնելու համար:

- Youthpass-ի հայեցակարգի և գործիքի մշակում, ինչպես նկարագրված է ստորև բերված «Youthpass-ի հետագա զարգացումը՝ որպես ճանաչման գործիք» բաժնում: Ճկունությունն այս համատեքստում առանցքային բառերից մեկն է՝ հաշվի առնելով երիտասարդական աշխատանքային մասնագիտական համայնքի և եվրոպական ծրագրերի շրջանակներում տարբեր դերակատարների ու թիրախային խմբերի ընթացիկ և առաջացող կարիքների բազմազանությանն արձագանքելու անհրաժեշտությունը:

- Հաղորդակցման և իրազեկման միջոցներ՝ ուսուցման և մտորման վերաբերյալ իրազեկվածության բարձրացման համար՝ որպես երիտասարդական աշխատանքի և ԵՄ ծրագրերի որակական ասպեկտ բոլոր գործողություններում: Այս միջոցները հիմնված կլինեն Youthpass-ի ռազմավարական հաղորդակցման հայեցակարգի վրա և կներառեն, ի թիվս այլնի, աշխատանք մասնագիտական համայնքի հետ և ոգեշնչող օրինակների տարածում: Դրանց նպատակն է նաև բարձրացնել կազմակերպությունների իրազեկվածությունը վավերացման առավելությունների վերաբերյալ, երբ խոսքը վերաբերում է դրանց հիմնական ծրագրերի տեսանելիությանը և ազդեցությանը:



- Էկրթական օժանդակ նյութեր, որոնք կօգնեն շահառուներին բացատրել Youthpass-ը մասնակիցներին և ուղեկցել նրանց իրենց ծրագրերի տարբեր փուլերում: Սա ներառում է այն բանի նկարագրում, թե ինչ է նշանակում Youthpass-ի որակյալ գործընթաց, ու տեղեկատվության և աջակցության տրամադրում շահառուներին, որպեսզի նրանք կարողանան պատրաստել, իրականացնել և հետևել ուսուցման վերաբերյալ մտորմանը և փաստաթղթավորմանը: Օժանդակ նյութերում հաշվի կառնվեն երիտասարդական աշխատանքային մասնագիտական համայնքի տարբեր աջակցող անձանց, օրինակ՝ երիտասարդական աշխատողների, դասընթացավարների, մենթորների, քոուչների և այլոց հնարավոր տարբերվող կարիքները:

- Թեև երիտասարդական աշխատողները և ուսուցումը դյուրացնելու նրանց կարողությունները առանցքային նշանակություն ունեն ցանկացած ծրագրի որակի համար, անհրաժեշտ է մշակել տեղեկություններ, որոնք անմիջապես երիտասարդների համար են, հատկապես եթե նպատակն է աջակցել այնպիսի ծրագրերում ճանաչմանը և վավերացմանը, որտեղ մասնակիցներին երիտասարդական աշխատողները չեն աջակցում: Նման թիրախային տեղեկությունները կօգնեն երիտասարդներին ակտիվորեն նկարագրել իրենց ուսուցման արդյունքները և դրա միջոցով բարձրացնել Youthpass գործընթացի կրթական արժեքը նրանց համար: Այս ուղեցույցը կարող է նաև աջակցել երիտասարդներին՝ մտորումն իրենց հետագա կրթական կամ կարիերայի ուղիներում օգտագործելու հարցում:

- Ռազմավարությունների և գործիքների մշակում երիտասարդական ծրագրերում երիտասարդական աշխատողների, դասընթացավարների և երիտասարդական աշխատանքի այլ մասնագետների ուսուցման ավելի լավ ճանաչման և վավերացման համար: Երիտասարդական աշխատողների լայն թիրախային խմբի կարիքները բավարարելու համար (նրանց կարողությունների զարգացման ճանաչման մասով), Youthpass հայեցակարգում կարող է անհրաժեշտ լինել ներառել տարբեր կամ լրացուցիչ տարրեր, որոնք դուրս են եվրոպական երիտասարդական երկու ծրագրերի կողմից ֆինանսավորվող ուսումնական միջոցառումներից:

- Թիրախային վերապատրաստման ծրագրերի մշակում և իրականացում՝ Youthpass-ի նկատմամբ ռազմավարական վերապատրաստման մոտեցման հիման վրա: Վերապատրաստման ծրագրեր մշակելիս հարկավոր է համոզվել, որ դրանք համատեղելի են Եվրոպական վերապատրաստման ռազմավարության հետ և մասնավորապես երիտասարդական աշխատողների և դասընթավարների կարողությունների մոդելների հետ: Նաև պետք է աջակցություն ցուցաբերվի Youthpass գործընթացի իրականացմանն Ազգային գործակալության ցանցում իրականացվող այլ վերապատրաստական ծրագրերում: Ազգային և եվրոպական մակարդակով այդպիսի վերապատրաստական ծրագրերում Youthpass-ի իրականացման որակն ապահովելու համար հարկավոր է թիրախավորել դասընթացավարների համայնքը:

- Համագործակցություն «Էրազմուս+ Երիտասարդություն» և Եվրոպական համերաշխության կորպուսի ծրագրերի Ազգային գործակալությունների ցանցի և ՍԱԼՏՈ ռեսուրսային կենտրոնների հետ: Youthpass-ի՝ որպես ծրագրի որակական ասպեկտի իրականացումը մեծապես կախված է Ազգային գործակալության ցանցի իրազեկվածությունից և աջակցությունից: Գործակալությունների որոշ գործընկերների արդեն հատուկ դեր է տրվել Youthpass-ի իրականացման և իրենց երկրներում ճանաչման խթանման գործում (տե՛ս Youthpass-ի աշխատակիցների վերաբերյալ պարբերությունը «Կառավարում» բաժնում): Այնուամենայնիվ, պետք է իրականացվեն հետագա աշխատանքներ՝ բարձրացնելու Ազգային գործակալության ամբողջ ցանցի իրազեկվածությունը երիտասարդական ծրագրերի ուսումնական արժեքի մասին և ստանալու դրա ակտիվ աջակցությունը՝ խթանելու Youthpass-ի միջոցով ուսուցման ճանաչումը և վավերացումը որպես համընդգրկող որակական հարց: Դա պահանջում է ավելի սերտ շփում Ազգային գործակալության գործընկերների հետ և նրանց աջակցում ՍԱԼՏՈ վերապատրաստում և համագործակցություն ռեսուրսային կենտրոնների կողմից: Անհրաժեշտ աջակցությունը բաղկացած կլինի տեղեկատվությունից և ուղեցույցից, պատրաստված նյութերից, որոնք Ազգային գործակալությունները կարող են հարմարեցնել ու տարածել, փոխանակման և վերապատրաստման կանոնավոր հնարավորություններից, տարածման և Ազգային գործակալությունների այլ ցանցերի միջոցով ուսուցման և Youthpass-ի խթանման հարցում աջակցությունից, և խորհրդատվական ու համատեղ ստեղծագործական գործընթացներին ներգրավվածությունից:

2

Գործողությունների ոլորտ 2.

Ուսուցում և ճանաչում

Գործողությունների այս ոլորտի նպատակն է ուժեղացնել երիտասարդական աշխատանքի ուսումնական արժեքի վերաբերյալ իրազեկվածությունը և ճանաչումը, մասնավորապես՝ երիտասարդական աշխատանքի կազմակերպությունների կարողությունների զարգացման միջոցով: Առաջարկվող միջոցառումների շրջանակը դուրս է եվրոպական երիտասարդական ծրագրերից՝ երիտասարդական աշխատանքի և կամավորության մասնագիտական համայնքում սիներգիաներ ստեղծելու համար:

- Միջոցներ՝ ուսումնասիրելու և բացատրելու ուսուցումը, կարողությունների զարգացումը և դրա ճանաչումը երիտասարդական աշխատանքում Եվրոպայում՝ հատուկ ուշադրություն դարձնելով ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցմանը: Սա նշանակում է ապացույցների ստեղծում, բանավեճերի խթանում, հասակակիցների ուսուցման աջակցություն և երիտասարդական աշխատանքի ուսումնական արժեքի վերաբերյալ ավելի մեծ ընդհանուր իրազեկվածության բարձրացում:

- Երիտասարդական աշխատանքի տարբեր մասնագետների՝ որպես ուսուցման վարողների, ու կազմակերպությունների իրազեկվածության բարձրացում և կարողությունների զարգացում՝ երիտասարդական աշխատանքի ուսումնական արժեքի բարձրացման մասով: Դրա համար Youthpass գործընթացը կարող է օրինակ ծառայել: Այս միջոցները ներառում են երիտասարդական աշխատանքում Youthpass գործընթացի մեթոդաբանության կիրառելիությունն ուսումնասիրելու և քննարկելու հնարավորություններ, ուսումնական և տեղեկատվական նյութեր և այլ հնարավոր հարմարեցված գործիքներ:

- Առաջարկել աջակցություն և խթանել համագործակցությունն ու սիներգիան երիտասարդական աշխատանքային մասնագիտական համայնքում այն գործընթացների և նախաձեռնությունների միջև, որոնք վերաբերում են ճանաչման ու վավերացման փուլերի տարբեր հարթություններին, մասնավորապես՝ Էրազմուս+ ծրագրի կողմից ֆինանսավորվող ռազմավարական նախաձեռնություններին: Նման համագործակցությունը կարող է հնարավորություններ ընձեռել միմյանցից սովորելու և Եվրոպական հանձնաժողովի հետ համագործակցելու միջոցով որակը բարձրացնելու համար՝ երիտասարդական դաշտում մեկնարկած գործընթացներին ու գործելակերպին ավելի լավ տեսանելիություն և ազդեցություն հաղորդելու ու համապատասխան քաղաքականության գործընթացներին նպաստելու համար գործողությունները համակարգելու միջոցով: Նման նախաձեռնությունների մասին իրազեկվածությունը բարձրացնելու և դրանց մարտահրավերները քննարկելու սկզբնական միջոցներին կարող են հաջորդել աջակցության ու համագործակցության հնարավորությունները, օրինակ՝ թեմատիկ փոխանակման ձևով:

- Ճանաչումը, որակը և նորարարությունն առաջնային տեղ են զբաղեցնում Եվրոպայում երիտասարդների աշխատանքի զարգացման օրակարգում: Եվրոպայում արդեն կան բազմաթիվ գործելակերպեր, որոնք ուղղված են երիտասարդության ոլորտում ուսուցման ճանաչմանը և վավերացմանը: Youthpass-ի հետ կապված աշխատանքը կարող է խթանել ու ոգեշնչել որակյալ մոտեցումներ, գործընթացներ և գործիքներ, որոնք ծառայում են նույն նպատակին՝ բարձրացնել երիտասարդական աշխատանքում ուսուցման վերաբերյալ իրազեկվածությունն ու դրա ազդեցությունը: Համապատասխան միջոցները, օրինակ՝ ապրանքանիշը, պետք է ուսումնասիրվեն՝ որակի ճանաչման նման մոտեցումների տեսանելիությունը և վստահելիությունը բարձրացնելու, ինչպես նաև այս մոտեցումների որակի մասով հետագա աջակցությունն ապահովելու նպատակով:

3

Գործողությունների ոլորտ 3.

Քաղաքականության աջակցություն

Գործողությունների այս ոլորտի նպատակն է նպաստել քաղաքականության մշակմանն ու իրականացմանն այն ոլորտներում, որոնք վերաբերում են երիտասարդական աշխատանքի ուսումնական արժեքին և ճանաչմանն ու վավերացմանը, ինչպես նաև խթանել երիտասարդական աշխատանքի և, մասնավորապես, Youthpass-ի դերը նման զարգացումներում: Գործողությունների այս ոլորտը նաև ենթադրում է ակտիվ համագործակցություն այլ համապատասխան ոլորտներից շահագրգիռ կողմերի և հատկապես նրանց միջև, ովքեր ակտիվ են ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման վավերացման գործում:

- Youthpass-ի իրականացումից և ԵՄ երիտասարդական երկու ծրագրերի շրջանակներում ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման ճանաչումից ու վավերացումից քաղված դասերը, մասնավորապես, ապացույցները աջակցվող ծրագրերում տեղի ունեցող ուսուցման և այդ համատեքստում ճանաչման ու վավերացման գործելակերպերի և փորձի մասին, պետք է տարածվեն համապատասխան ուղիներով և ներկայացվեն այնպիսի ձևաչափով, որը կարող է տեղեկացվածություն ապահովել քաղաքականության և գործելակերպի մշակման համար տարբեր մակարդակներում: Կարելի է մշակել երիտասարդական ոլորտում վավերացման ընթացակարգերի օրինակելի լուծումներ և առաջարկություններ:

- Հարկավոր է ձգտել սիներգիաների ԵՄ երիտասարդական ռազմավարության և Եվրոպական երիտասարդական աշխատանքի օրակարգի իրականացման մասով: Հետագա ազգային ծրագրեր պլանավորողները (ՀԱԾՊ-ներ), որոնք կապված են ԵՄ երիտասարդական ռազմավարության հետ, առաջարկում են գաղափարներ ազգային մակարդակում համակարգային զարգացումների և առաջնահերթությունների վերաբերյալ, ու կարևոր հիմք հանդիսանում սիներգիաների և համագործակցության ներուժի բացահայտման համար: Սիներգիաներն ու փոխլրացումները պետք է ապահովվեն նաև այլ ռազմավարությունների մասով, որոնք մշակվել են ԵՄ երիտասարդական ծրագրերի, մասնավորապես՝ Եվրոպական վերապատրաստման ռազմավարության, ներառման և բազմազանության ռազմավարության ու Երիտասարդների մասնակցության ռազմավարության համատեքստերում:

- Youthpass-ի շուրջ մշակման աշխատանքները և Ազգային գործակալություններին տրամադրվող աջակցությունը կարող են մեծացնել երիտասարդական ոլորտի մասնակցությունը համապատասխան քաղաքական բանավեճերում և համակարգային զարգացումներում: Նրանք կարող են օգնել ոգեշնչել, զարգացնել և աջակցել ազգային ու եվրոպական մակարդակներում քաղաքականության մասով որոշումների և փոխադարձ ուսումնական միջոցառումների արդյունքների իրականացմանը:

- Մասնագիտական համայնքի մասնակցությունը ճանաչման և վավերացման հետ կապված քաղաքականության գործընթացներում պետք է ամրապնդվի համակարգված մոտեցմամբ: Կանոնավոր համագործակցության ու փոխանակման, ինչպես նաև կամավորության և այլ հարակից ոլորտների հետ համագործակցության միջոցով երիտասարդական կազմակերպությունները և դերակատարները կարող են ավելի տեսանելի դարձնել իրենց աշխատանքի բնույթը, ավելի արդյունավետ լինել դրա բնույթը բացատրելու հարցում և ավելի միասնական լինել լիազոր մարմինների և այլ շահագրգիռ կողմերի հետ իրենց հաղորդակցման մեջ:

- Youthpass-ի հաղորդակցությունը ներառում է նաև երիտասարդական աշխատանքի ավելի լայն համայնքի իրազեկում եվրոպական քաղաքականության այն զարգացումների վերաբերյալ, որոնք կապված են ճանաչման ու վավերացման, ինչպես նաև տեղեկացման գործելակերպի և հետագա քաղաքականության իրականացման աջակցման հետ: Այն նաև ներառում է երիտասարդական աշխատանքում ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման ճանաչման և վավերացման վիճակի վերաբերյալ տեղեկությունների հավաքագրում ու ներկայացում երիտասարդական ոլորտում քաղաքական շահագրգիռ կողմերին, ինչպես նաև այլ շահագրգիռ դերակատարներին:

7

Youthpass-ի՝ որպես ճանաչման գործիքի հետագա զարգացումը

Որպեսզի Youthpass-ը որպես ճանաչման գործիք աջակցի ռազմավարության վերը նշված նպատակներին և խնդիրներին, այն պետք է ամրապնդի իր հիմնական արժեքը և հետագայում զարգացվի ինչպես հայեցակարգային առումով, այնպես էլ տեխնիկապես: Youthpass-ը պետք է պահպանի իր դերը որպես եվրոպական ճանաչման գործիք, որը, խրախուսելով գիտակցված մտորման գործընթացը, ընդգծում և ամրապնդում է ԵՄ երիտասարդական երկու ծրագրերի շրջանակներում իրականացվող միջոցառումների ուսուցման արժեքը: Youthpass-ը պետք է հասանելի դառնա այս բոլոր տարբեր միջոցառումներին աջակցելու համար և պետք է խթանվի որպես որակային հատկանիշ ծրագրերի շրջանակներում:

Մինչև 2027 թվականը Youthpass-ը որպես ճանաչման գործիք պետք է ունենա հետևյալ բնութագրերը.:

- Բարելավված Youthpass-ը կկենտրոնանա երկու ծրագրերի կողմից աջակցվող տարբեր ձևաչափերով և միջոցառումներում տեղի ունեցող ուսուցման մասով մտորումը, նույնականացումը և փաստաթղթավորումը: Youthpass-ն օգտագործելու դրդապատճառը պետք է լինի մասնակիցներին՝ իրենց ուսուցման վերաբերյալ ավելի իրազեկ դառնալու և այն ամրապնդելու, բացահայտելու և փաստաթղթավորելու հարցում օգնելը, և այդ միջոցով ծրագրերի որակը բարելավելը:

- «Էրազմուս+ Երիտասարդություն» ու Եվրոպական համերաշխության կորպուսի և նրանց հաջորդող ծրագրերի բոլոր մասնակիցները կշարունակեն իրավունք ունենալ անցնելու Youthpass-ի գործընթացը և ձեռք բերելու իրենց ուսուցման արդյունքների վերաբերյալ վավերացված փաստաթղթեր: Youthpass-ը մնում է կամընտրական օգտատերերի համար՝ ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման առանձնահատկություններին համապատասխան: Youthpass-ը նաև ավելի լավ կարտացոլի ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման բնույթը, քանի որ այն կենտրոնանում է սովորողի կարիքների վրա, օրինակ՝ հնարավորություն տալով սովորողներին համատեղ ստեղծել Youthpass-ի իրենց անհատական հատկագրերը: Թեև գործընթացը պետք է պարզեցված մնա երիտասարդների կողմից օգտագործման համար, ապագա մասնակիցների հաշիվները երիտասարդներին ավելի շատ վերահսկողություն կտան իրենց մտորման գործընթացի և իրենց մասնակցած ծրագրերից ստացված ուսումնական արդյունքների նկարագրման նկատմամբ:

- Youthpass-ի իրականացման կենտրոնական տարրը և մեկնարկային կետն այսուհետ առավելապես կլինի մտորման գործընթացը, որը բարձրացնում է ծրագրերում ներգրավվածության տարբեր փուլերում ձեռք բերված ուսումնական արդյունքների մասով իրազեկվածությունը: Youthpass-ը կառաջարկի թվային մտորման գործիք, ինչպես նաև այլ աջակցման գործիքներ, որոնք կօգնեն նախագծել նման գործընթացը՝ ծրագրերի առանձնահատկությունների և թիրախային խմբերի կարիքների համաձայն:

- Բարելավված Youthpass-ն ավելի լավ կաջակցի աջակցվող ծրագրերին առնչվող ամբողջ ուսումնական գործընթացին, ներառյալ նախապատրաստումը և հետագա ընթացքը, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, տարբեր միջոցառումները մեկ ծրագրի շրջանակներում: Youthpass-ի կառուցվածքը ճկուն կլինի և կհամապատասխանի երիտասարդական ծրագրերի կողմից աջակցվող նախագծերի և միջոցառումների տեսակների բազմազանությանը:

- Հետագա Youthpass գործիքի կառուցվածքը թույլ կտա ամփոփ նկարագրել այն կարողությունները, որոնք մշակվել են երիտասարդական ծրագրերի կողմից աջակցվող ուսումնական միջոցառումների միջոցով, և կհավաքվի ու կցուցադրվի մասնակիցների առցանց հատկագրերում: Ակնկալվում է, որ սա նրանց հնարավորություն կտա կապել իրենց կարողությունների նկարագրությունները այլ հարթակների հետ, օրինակ՝ Europass-ի կամ այլ մասնագիտական հարթակների/գործիքների հետ, որոնք ընդլայնելու են Youthpass-ի առավելությունները տիրապետողների հետագա կրթական կամ մասնագիտական ուղիների համար:

- Երիտասարդական աշխատողների և դասընթացավարների կարիքները որպես սովորողներ և Youthpass-ի տիրապետողներ երկու ծրագրերի համատեքստում ու դրանցից դուրս նույնպես պատշաճ կերպով հաշվի կառնվեն: Youthpass-ը կառաջարկի համապատասխան ճանաչման գործիք այս թիրախային խմբի համար՝ համապատասխան կարողությունների շրջանակով և, հնարավոր է, հարմարեցված բրենդավորմամբ, որն ավելի լավ կարտացոլի երիտասարդական աշխատողների զարգացման մասնագիտական բնույթը:

- Youthpass համակարգում ուսուցման արդյունքների նկարագրությունները կշարունակեն համապատասխանեցվել ցկյանս ուսուցման առանցքային կարողությունների եվրոպական շրջանակին: Կմշակվեն լուծումներ, որպեսզի տրամադրվի ավելի լավ աջակցություն հատկապես այն ձեռք բերված կարողությունների մասով մտորմանն ու փաստաթղթավորմանը, որոնք առավել հաճախ մշակվում են երիտասարդական աշխատանքի և կամավորության համատեքստում: Նման լուծումների մշակումը ոգեշնչված կլինի առկա (ավելի մանրամասն) կարողությունների այնպիսի շրջանակներից, ինչպիսին է LifeEComp-ը: Երիտասարդական աշխատողների կարողությունների զարգացումը նկարագրելու համար կարող են համապատասխան հիմք ծառայել Եվրոպական վերապատրաստման ռազմավարության շրջանակներում մշակված կարողությունների մոդելները:

- Youthpass-ը կլինի ժամանակակից ճանաչման գործիք, որն արտացոլում է տեխնոլոգիական զարգացումների արդի վիճակը: Սա կբարելավի օգտատերերի համար հարմարավետությունն ու գրավչությունը, ինչպես նաև հնարավորություն կտա փոխգործակցելու այլ (հատկապես Եվրոպական հանձնաժողովի) համակարգերի հետ, ըստ անհրաժեշտության:

- Youthpass-ի զարգացման շրջանակներում հատուկ ուշադրություն է դարձվում ավելի քիչ հնարավորություններ ունեցող երիտասարդներին աջակցությանը, որպեսզի նրանք կարողանան լիարժեք օգուտ քաղել ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման միջոցառումներից ու դրական ազդեցություն ապահովել իրենց անձնական զարգացման և ապագա ուղիների հետ կապված: Youthpass-ի մասով հետագա բոլոր մշակումները կնպաստեն Youthpass գործիքի և գործընթացի մատչելիության ու ներառականության բարելավմանը: Սա ներառում է հատուկ կարիքներով և/կամ հաշմանդամություն ունեցող անձանց համար վեբ գործիքների և առցանց հրապարակումների հասանելիության բարելավումը: Մեծ ուշադրություն կդարձվի Youthpass-ի բոլոր թիրախային խմբերի կողմից գործիքի և գործընթացի դյուրին օգտագործումն ապահովելուն:

- Այն կշարունակի լինել բազմալեզու գործիք, որն ապահովում է առցանց գործիքի, վկայականների և այլ օժանդակ նյութերի որակյալ թարգմանությունները:

- Այն նաև կաջակցի առցանց ուսուցման այն միջոցառումներին, որոնք իրականացվում են երիտասարդական ծրագրերի շրջանակներում, ներառյալ այն ծրագրերը, որոնք նախատեսված են որպես ինքնուրույն ուսուցման գործիքներ: Մասնագիտական համայնքի հետ խորհրդատվություններ կանցկացվեն ճանաչման գործիքի հնարավոր հատուկ ձևաչափի անհրաժեշտության վերաբերյալ:

8

Ռազմավարության թիրախային խմբերը

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է Youthpass ռազմավարության թիրախային խմբերի ակնարկը՝ կանխատեսված հիմնական միջոցառումների վերաբերյալ:

Երիտասարդներ

- Youthpass գործիքի թիրախային խումբ
- Տեղեկատվություն և աջակցություն երիտասարդական աշխատողների միջոցով
- Նաև ուղղակի, գրավիչ և մոտիվացնող տեղեկատվություն Youthpass կայքի և այլ գործիքների միջոցով

Երիտասարդական աշխատողներ

- Youthpass գործիքի թիրախային խումբ. անհրաժեշտ է հատուկ կառուցվածք
- Տեղեկատվություն երիտասարդական նախագծերում ուսուցման բնույթի և արժեքի, ու Youthpass-ի ներուժի մասին
- Տեղեկատվություն, ուղեցույց և ուսումնական նյութեր այն մասին, թե ինչպես աջակցել ուսուցմանը երիտասարդական աշխատանքի միջոցառումների ընթացքում
- Եվրոպական մակարդակով համապատասխան քաղաքականության գործընթացների մասին տեղեկատվություն
- Գործիքներ, որոնք կօգնեն բացատրել Youthpass-ը մասնակիցներին

Դասընթացավարներ և կիրարկողներ

- Youthpass գործիքի թիրախային խումբ. անհրաժեշտ է հատուկ կարգավորում
- Տեղեկատվություն ու կրթական աջակցություն երիտասարդական նախագծերում ուսուցման բնույթի և արժեքի և այս ոլորտում Youthpass-ի ներուժի մասով
- Աջակցություն Youthpass-ի գործընթացի ներդրմանը տարբեր վերապատրաստման և տեղեկատվական միջոցառումների ընթացքում
- Եվրոպական մակարդակով համապատասխան քաղաքականության գործընթացների մասին տեղեկատվություն
- Գործիքներ, որոնք կօգնեն բացատրել Youthpass-ը մասնակիցներին



Երիտասարդական աշխատանքային կազմակերպություններ

- Ոգեշնչում, տեղեկատվություն և կարողությունների զարգացում՝ իրենց աշխատանքի ուսուցման արժեքն ամրապնդելու համար
- Լուծումներ, որոնք թույլ են տալիս ապահովել երիտասարդական աշխատանքում ուսուցման ճանաչման հետ աշխատելու նրանց մոտեցման տեսանելիությունը և ճանաչումը (օրինակ՝ ապրանքանիշ)
- Եվրոպական մակարդակով համապատասխան քաղաքականության գործընթացների մասին տեղեկատվություն

Ազգային գործակալություններ և ՍԱԼՏՈ ռեսուրսային կենտրոններ

- Երիտասարդության և համերաշխության ծրագրերի ուսուցման արժեքի վերավերյալ իրազեկվածության խթանում ԱԳ ամբողջ անձնակազմի շրջանում
- Տեղեկատվական, աջակցման և տեսանելիության նյութեր, որոնք կարող են հարմարեցվել ազգային համատեքստերին
- Աջակցություն կրթական միջոցառումների մշակմանը և իրականացմանը (վերապատրաստում և այլն)՝ հիմնվելով դրանց համատեքստում առկա կարիքների վրա
- Աջակցություն և ոգեշնչում ազգային մակարդակով ճանաչման/վավերացման մասով զարգացումներին
- Եվրոպական մակարդակով համապատասխան քաղաքականության գործընթացների մասին տեղեկատվություն

Լիազոր մարմիններ, ներառյալ՝Եվրոպական հանձնաժողովը

- Տեղեկատվություն ԵՄ երիտասարդական ծրագրերի փորձի և արդյունքների մասին՝ ուսման, ճանաչման ու Youthpass-ի մասով
- Մասնակցություն ճանաչման ու վավերացման գործելակերպերի և ընթացակարգերի վերաբերյալ բանավեճերում

9 Ռազմավարության իրականացման գործիքներ

Ռազմավարության իրականացման **հիմնական գործիքը** բազմալեզու **Youthpass վեբկայքն է և տեխնիկական գործիքը**, որը բաղկացած է օգտատերերի միջավայրից և Youthpass տվյալների բազայից՝ ուսուցման փաստաթղթավորման ու հավաստագրերի տրամադրման համար: Youthpass կայքը նաև ուղեցույցի և կրթական նյութերի հիմնական աղբյուրն է, ինչպես նաև Youthpass-ի հետ կապված նորությունների և այլ տեղեկությունների ալիք:

Ռազմավարության իրականացման համար նախատեսված հետագա գործիքները ներառում են.

1

Տեղեկատվության և տեսանելիության համար

- Եվրոպական հանձնաժողովի հաղորդակցման ռազմավարությունը երիտասարդական ծրագրերի մասով, ներառյալ հիմնական ծրագրային փաստաթղթերը, ինչպիսիք են երկու երիտասարդական ծրագրերի ծրագրային ուղեցույցները.
- ԵՄ երիտասարդական պորտալ՝ որպես երիտասարդների համար մուտք դեպի երիտասարդական ծրագրեր ու տեղեկատվական ալիք.
- Youthpass-ի հաղորդակցման հայեցակարգ, որը նկարագրում է անհրաժեշտ հաղորդակցման միջոցները և ալիքները, ներառյալ սոցիալական մեդիան.
- Youthpass-ի և երիտասարդական աշխատանքում ուսուցման ու ճանաչման/վավերացման վերաբերյալ հրապարակումներ (ներառյալ ձեռնարկներ, թռուցիկներ, էսսեներ, հետազոտական զեկույցներ և այլն).
- Քաղաքականության վերաբերյալ պարբերական ամփոփագրեր.
- ՍԱԼՏՈ-ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ ցանցի տեղեկագիր և կայք.
- «Էրազմուս+ Երիտասարդություն» և Եվրոպական համերաշխության կորպուսի ծրագրերին առնչվող լրատվական ու տեղեկատվական ալիքներ՝ եվրոպական, տարածաշրջանային և ազգային մակարդակներում, մասնավորապես՝ Ազգային գործակալությունների տեղեկատվական ալիքներ.
- Եվրոպական այլ միջոցառումներ և շահագրգիռ կողմերի հարթակներ, որոնք վերաբերում են երիտասարդությանը, ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցմանը, ճանաչմանը և վավերացմանը:

2

Կրթական միջոցառումների և համագործակցության համար

ԵՄ երիտասարդական ծրագրերի ազգային գործակալությունների TCA/NET (Անդրազգային համագործակցության միջոցառումներ/Կապերի հաստատման (ցանցային) միջոցառումներ) շրջանակը կարևոր դեր է խաղում հետևյալ միջոցառումների իրականացման համար

- Առկա, խառը և առցանց ուսուցման ու վերապատրաստման միջոցառումներ շահառուների, կիրարկողների և գործընկերների համար.
- Միջոցառումների շարք (սեմինարներ, աշխատաժողովներ, աշխատանքային խմբեր կամ այլ ձևաչափեր), որոնք փոխանակման, ուսուցման ու համագործակցման հնարավորություն կտան մասնագետների համայնքում, և որոնք սահմանվում են համայնքի հետ համատեղ.
- Միջոցառումներ (կոնֆերանսներ և այլն), որոնք աջակցում են փոխադարձ ուսուցմանը և ազգային մակարդակով գործընթացների զարգացմանը.
- Առկա և առցանց հանդիպումներ Ազգային գործակալության գործընկերների հետ՝ կանոնավոր և ժամանակավոր աջակցություն ցուցաբերելու համար.
- Համագործակցություն ազգային գործակալությունների և կիրարկողների ու դասընթացավարների միջև ազգային և տարածաշրջանային մակարդակներում.
- Համագործակցություն ՍԱԼՏՈ-ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ ցանցի շրջանակներում:

3

Գիտելիքների կուտակման համար

- Մշտադիտարկման հայեցակարգ Youthpass-ի և դրա միջոցառումների համար, ներառյալ Youthpass-ի մասով զարգացումների տարեկան ակնարկը.
- Youthpass տվյալների բազա (youthpass.eu կայքում).
- Հետազոտական գործիքներ, որոնք մշակվել են RAY շրջանակի և հետազոտությունների մասով այլ գործընկերների հետ համագործակցությամբ:

10 Իրականացնող դերակատարներ

Ինչպես հայտնի է, Youthpass-ը վերաբերում է ԵՄ երիտասարդական ծրագրերին, ուստի այս ռազմավարության կենտրոնական համակարգող շահագրգիռ կողմերն **են Եվրոպական հանձնաժողովը և ՍԱԼՏՈ վերապատրաստման և համագործակցության ռեսուրսային կենտրոնը**, որոնք ռազմավարության հիմնական իրականացնողներն են եվրոպական մակարդակում: 2019 թվականին ընդունված՝ թեմատիկ ՍԱԼՏՈ-ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ ռեսուրսային կենտրոնների լիազորությունների շրջանակի համաձայն՝ Ռեսուրսային կենտրոնները պատասխանատու են երիտասարդության ոլորտում Էրազմուս+ նախագծերի որակի և ազդեցության բարելավման համար: Դրանով նրանք հանդես են գալիս որպես գիտելիքային և փորձագիտական կենտրոններ, որոնք կապում են ԵՄ երիտասարդական ծրագրերի արդյունքները համապատասխան քաղաքականության մշակման հետ:

Համագործակցային գործընկերների շարքը հիմնականում ներառում **է Ազգային գործակալությունները և ՍԱԼՏՈ-ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ ռեսուրսային կենտրոնները**, որոնք իրականացնում են ԵՄ երիտասարդական ծրագրերը: Դրանց առաջարկվում է օգտագործել ռազմավարությունը Գործողությունների երեք ոլորտներում նախանշված միջոցառումների ամբողջ ընթացքում՝ ազգային/տարածաշրջանային մակարդակում ռազմավարական գործողություններ ձեռնարկելիս առաջնորդվելու և ոգեշնչվելու համար: Մասնավորապես, նրանց առաջակվում է պլանավորել միջոցառումներ՝ բարձրացնելու երիտասարդական աշխատանքի և երիտասարդական ծրագրերի ուսումնական արժեքի, ինչպես նաև Youthpass-ի՝ որպես այս արժեքը փաստաթղթավորելու և անհատական մակարդակում ցուցադրելու սխեմայի տեսանելիությունը և ճանաչումը: Դրանք նպաստում են Youthpass-ի հետ կապված զարգացումներին

ազգային մակարդակում իրականացումից ստացված գիտելիքներով և պատկերացումներով: Ավելին, այն, թե ինչպես են Ազգային գործակալությունները և ՍԱԼՏՈ ցանցը իրականացնում Youthpass-ն իրենց սեփական միջոցառումներում և թե ինչպես են նրանք բացատրում այն, մեծ ազդեցություն ունի շահառուների և հետագա շահագրգիռ կողմերի կողմից Youthpass-ի ընկալման վրա: Ազգային գործակալությունների և, հնարավոր է, տարածաշրջանային ՍԱԼՏՈ ռեսուրսային կենտրոնների աջակցությունն անհրաժեշտ է Youthpass-ի հավաստագրերի և այլ նյութերի բազմալեզու լինելն ապահովելու համար: ՍԱԼՏՈ վերապատրաստման և համագործակցության ռեսուրսային կենտրոնը ձգտում է շարունակական աջակցություն առաջարկել Ազգային գործակալությունների ցանցին ճանաչման և վավերացման իրենց աշխատանքում՝ համապատասխան նյութերի, համագործակցության մասով միջոցառումների և ազգային գործընթացներին այլ աջակցության միջոցով, որտեղ անհրաժեշտ և հնարավոր է:

Ավելին, ՍԱԼՏՈ-ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ ռեսուրսային կենտրոններն աշխատում են հետագա ծրագրային ռազմավարությունների հետ, մասնավորապես Եվրոպական վերապատրաստման ռազմավարության, Ներառման և բազմազանության ռազմավարության և Երիտասարդների մասնակցության ռազմավարության հետ: Դրանք վերաբերում են ընթացիկ փաստաթղթին, քանի որ դրանք ամրապնդում են երիտասարդական ծրագրերի որակը իրենց առանձնահատուկ տեսանկյունից: Սիներգիաները պետք է ամրապնդվեն այս ռազմավարությունների, ինչպես նաև ՍԱԼՏՈ-ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ ռեսուրսային կենտրոնների կողմից զբաղեցրած այլ դերերի մասով՝ ապահովելու Youthpass հայեցակարգի տարբեր ասպեկտների համապատասխանությունը ՍԱԼՏՈ-ների հատուկ թիրախային խմբերի համար:

Այն երիտասարդական աշխատողների, դասընթացավարների և այլ կիրարկողների իրազեկվածությունն ու համոզվածությունը, ովքեր մասնավորապես աշխատում են ԵՄ երիտասարդական ծրագրերի համատեքստում, կարևոր է Youthpass-ի գործնական ու որակյալ իրականացման համար, որն իր հերթին ապահովում է դրա առավելագույն հնարավոր ազդեցությունը նրանց մասնակիցների համար: Կարևոր է, որ նրանք իրենց միջոցառումների մասնակիցներին փոխանցեն ուսուցման վերաբերյալ մտորման և դրա փաստաթղթավորման արդիականությունն ու կարևորությունը և աջակցեն նրանց այս գործընթացում՝ անկախ միջոցառման բնույթից:

Ռազմավարության մեջ նկարագրված որոշ միջոցներ պահանջում են համագործակցություն այլ **կապակցված շահագրգիռ կողմերի հետ**, ինչպիսիք են երիտասարդական ոլորտում ակտիվ կազմակերպությունները՝ գործնական համայնքը, տեղական/տարածաշրջանային/ազգային իշխանությունները և եվրոպական աշխատանքային խմբերը, հարթակներն ու հաստատությունները՝ այլ համապատասխան քաղաքականության ու գործելակերպի շրջանակների և կարգավորումների հետ կապն ապահովելու համար: Այս խումբը նաև ներառում է հետազոտողներ և շահագրգիռ կողմեր այլ ոլորտներից, ինչպիսիք են կրթությունը կամ զբաղվածությունը, ովքեր հետաքրքրված են ոչ ֆորմալ և ինֆորմալ համատեքստերում ուսուցման ճանաչման ու վավերացման հետ կապված թեմաներով:

11

Կառավարում

Youthpass ռազմավարությունն ուղղորդում է ՍԱԼՏՈ վերապատրաստման և համագործակցության այն ռեսուրսային կենտրոնի աշխատանքը, որը պատասխանատու է Youthpass-ի իրականացման համար՝ Եվրոպական հանձնաժողովի հետ սերտ համագործակցությամբ և հետագա շահագրգիռ կողմերի աջակցությամբ:

Ինչ վերաբերում է Youthpass ռազմավարությանը, ապա Եվրոպական հանձնաժողովը երկակի առաքելություն ունի: ԵՄ ֆինանսավորման այնպիսի ծրագրերի իրականացնելիս, ինչպիսիքն են Էրազմուս+ ծրագիրը և Եվրոպական համերաշխության կորպուսը, Հանձնաժողովի նպատակն է ապահովել, որ հիմնական դերակատարներին տրամադրվեն անհրաժեշտ գործիքներ դրա որակյալ իրականացման համար: Հանձնաժողովը նաև առանցքային դեր ունի քաղաքականության

մասով համագործակցության այնպիսի շրջանակների իրականացման գործում, ինչպիսին է ԵՄ երիտասարդության ռազմավարությունը, որն ընդգծում է երիտասարդական աշխատանքի միջոցով ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների ճանաչման անհրաժեշտությունը, որին կարող է նպաստել Youthpass ռազմավարությունը:

Ամենակարևոր կառավարող մարմինը, երբ խոսքը վերաբերում է ռազմավարությանը, Youthpass խորհրդատվական խումբն է, որը բաղկացած է ինստիտուցիոնալ և անկախ փորձագետներից: Ակնկալվում է, որ նրանք կհետևեն և կվերահսկեն Youthpass ռազմավարության ու եռամյա գործողությունների ծրագրերի իրականացումը և, անհրաժեշտության դեպքում, նպաստեն զարգացումների դրանց համատեքստում: Youthpass խորհրդատվական խմբի կազմը պարբերաբար վերանայվում է:

Ինչ վերաբերում է Ազգային գործակալություններում Youthpass-ի աշխատակիցներին, ապա Ազգային գործակալությունների շրջանակներում նախատեսվում է հորիզոնական դեր այն գործընկերների համար, ովքեր Youthpass-ի հետ կապված տեղեկատվություն են փոխանցում իրենց երկրների շահագրգիռ կողմերից և շահագրգիռ կողմերին, օգնում կազմակերպել Youthpass-ի հետ կապված նյութերի թարգմանությունը և ռազմավարական տեսանկյունից աջակցություն ցուցաբերում Youthpass ռազմավարության իրականացմանն ազգային ու, անհրաժեշտության դեպքում, եվրոպական մակարդակներում: Ռազմավարության իրականացման գործողությունների ծրագրերը մշակվում են Ազգային գործակալություններ և ՍԱԼՏՈ վերապատրաստման և համագործակցության ռեսուրսային կենտրոնների կողմից: Պետք է բավականաչափ ժամանակ տրամադրվի Youthpass-ի աշխատակիցներին այս առաջադրանքները կատարելու համար: Նրանց աշխատանքին կաջակցեն պարբերական առցանց և առկա կարգով հանդիպումները ՍԱԼՏՈ վերապատրաստման և համագործակցության ու Եվրոպական հանձնաժողովի հետ:

ՍԱԼՏՈ-ի լիազորությունների շրջանակի համաձայն՝ ՍԱԼՏՈ-ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ ռեսուրսային կենտրոնների և Եվրոպական հանձնաժողովի պարբերական հանդիպումները կաջակցեն ռազմավարության իրականացմանը:

Ժամանակացույց. Youthpass ռազմավարությունն ուղղորդում է Youthpass-ի շուրջ աշխատանքը մեծամասամբ Էրազմուս+ և Եվրոպական համերաշխության կորպուսի ծրագրերի և ԵՄ ներկայիս երիտասարդական ռազմավարության ընթացքում, որը կգործի մինչև 2027 թվականի վերջը: Ռազմավարության հետ կապված աշխատանքները կկազմակերպվեն եռամյա գործողությունների ծրագրերի միջոցով, որոնք սահմանում են ավելի լայն նպատակներ և գործընթացներ համապատասխան ժամանակաշրջանների համար՝ համառոտ տարեկան աշխատանքային այն ծրագրերի ուղեկցմամբ, որոնք նախատեսում են ավելի կոնկրետ միջոցներ:

Ռազմավարությունը կվերանայվի վերջին եռամյա գործողությունների ծրագրի ընթացքում՝ ստորև նկարագրված մշտադիտարկման տվյալների և հետազոտության արդյունքների դիտարկմամբ:

12 Մշտադիտարկում, գնահատում և հետազոտություն

1

Ռազմավարության մշտադիտարկման ցուցանիշներ.

Youthpass գործիքի և ռազմավարության մշակման և իրականացման մշտադիտարկման համար առաջարկվում են հետևյալ ընդհանուր ցուցանիշները:

- Youthpass գործիքի տեխնիկական և հայեցակարգային զարգացում, ինչպես նշված է այս ռազմավարության մեջ: Սա կներառի հարցումների արդյունքները կամ գնահատման այլ միջոցներ՝ ուսումնասիրելու այս զարգացումների ազդեցությունը:
- Ռազմավարության մեջ նկարագրված այլ նախաձեռնությունների և գործընթացների իրականացում, օրինակ՝ կրթական միջոցներ կամ ճանաչման մասով բանավեճերին մասնակցություն ՍԱԼՏՈ վերապատրաստման և համագործակցության ռեսուրսային կենտրոնի և ռազմավարության այլ շահագրգիռ կողմերի կողմից:
- Youthpass-ի օգտագործում. ընդհանուր առմամբ, ինչպես նաև «Էրազմուս+ Երիտասարդություն» և Եվրոպական համերաշխության կորպուսի ծրագրերի կողմից աջակցվող միջոցառումների տարբեր տեսակների շրջանակներում: Նպատակն է հասնել Youthpass-ի ավելի մեծ և հավասարակշռված օգտագործման բոլոր տեսակի միջոցառումներում: Youthpass-ի վիճակագրությունը հասանելի կլինի 2018 թվականի Youthpass մշտադիտարկման հայեցակարգի համաձայն:
- Youthpass-ի օգտագործում ծրագրի տարբեր երկրներում: Նպատակն է հասնել Youthpass-ի ավելի մեծ և հավասարակշռված օգտագործմանը տարբեր երկրներում:
- Youthpass-ի տեղեկատվության և հաղորդակցության ընդգրկույթ՝ կապված Youthpass-ի վերաբերյալ նորությունների հետ, որոնք տարածվում են ՍԱԼՏՈ տեղեկագրի միջոցով, մեծացված ընդգրկույթ Youthpass կայքի միջոցով, մեծացված ընդգրկույթ ՍԱԼՏՈ վերապատրաստման և համագործակցության սոցիալական մեդիա ալիքների միջոցով:
- Առցանց աջակցության միջոցների հասանելիություն. մասնակցություն առցանց ուսումնական միջոցառումներին, առցանց հրապարակումների ներբեռնում:
- Youthpass-ի հավաստագրերի առկայություն եվրոպական տարբեր լեզուներով, ինչպես նաև այլ օժանդակ նյութերի թարգմանված տարբերակներով:

2

Գնահատում

Այս ռազմավարության ազդեցության գնահատման համար հիմք կհանդիսանան եռամյա գործողությունների ծրագրերի զեկույցները, ավելի կոնկրետ՝ դրանց մասով նախատեսված ուղենիշների և նպատակների ձեռքբերումը: Որպես այս զեկույցների մաս և ի լրումն վերը նշված ցուցանիշների հատկորոշման, կարող են դիտարկվել նաև ազգային գործակալություններին ուղղված հարցումները՝ ազգային մակարդակում զարգացումները, ջանքերն ու մարտահրավերները բացահայտելու համար:

Բացի ռազմավարության ազդեցությունն ուսումնասիրելուց, դրա իրականացմանը կարող է աջակցել նաև ռազմավարության կենտրոնական շահագրգիռ կողմերի, մասնավորապես՝ ՍԱԱՏՈ վերապատրաստման և համագործակցության ռեսուրսային կենտրոնի աշխատանքի գնահատումը և հնարավոր հետագա բարելավումը:

3

Հետազոտություն

Ռազմավարության իրականացմանը հաջորդող մի քանի տարիների ընթացքում պետք է իրականացվի ազդեցության ուսումնասիրություն՝ Youthpass-ի իրականացման բնույթն ու դրա ազդեցությունը խորը ուսումնասիրելու համար: Դրա արդյունքները ամուր հիմք կհանդիսանան հետագա մտորումների և գործողությունների համար: Ազդեցության վերաբերյալ երկրորդ ուսումնասիրության անցկացումը կարելի է դիտարկել ռազմավարության ժամանակաշրջանի ավարտին:

RAY-ի պարբերական մշտադիտարկման ուսումնասիրություններն պարբերական արժեքավոր գիտական պատկերացում են տալիս Youthpass-ի և ԵՄ երիտասարդական երկու ծրագրերի շրջանակներում ուսուցման ու ճանաչման հետ կապված ասպեկտների վերաբերյալ: Պարբերական ուսումնասիրությունները կարող են համալրվել Youthpass-ի հետ կապված թեմաների վրա կենտրոնացված հետազոտություններով:

Գիտական նախաձեռնություններ կպահանջվեն նաև այս ռազմավարության մեջ նկարագրված որոշ խնդիրների և դերերի կատարման համար, մասնավորապես՝ երիտասարդական աշխատանքում ուսուցման ինֆորմալ բնույթը հայեցակարգելու համար:

13

Ռազմավարության մշակում և երախտիքներ

Youthpass ռազմավարությունը մշակվել է ՍԱԼՏՈ վերապատրաստման և համագործակցության ռեսուրսային կենտրոնի կողմից՝ Եվրոպական հանձնաժողովի հետ համագործակցությամբ: Սա ներառում էր խորհրդատվություններ Youthpass խորհրդատվական խմբի, Ազգային գործակալությունների և երիտասարդական աշխատանքի, կամավորության, ինչպես նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման ճանաչման ու վավերացման այլ փորձագետների հետ:

ՍԱԼՏՈ վերապատրաստման և համագործակցության ռեսուրսային կենտրոնը սրտանց շնորհակալություն է հայտնում բոլոր նրանց, ովքեր խորհրդատվությունների միջոցով նպաստել են այս ռազմավարության մշակմանը: Հուսով ենք, որ մեզ հաջողվել է ստորև թվարկել բոլոր հեղինակներին. եթե որևէ մեկին բաց ենք թողել, ապա խնդրում ենք ներել մեզ: Շնորհակալություն ենք հայտնում հետևյալ անձանց՝

Adele Tinaburri, Alexandre Fonseca, Alice Dartout, Andrea Casamenti, Anita Silva, Annamaria Simeone, Annina Kurki, Antonella Rocchi, Barnabás Gulyás, Beata Pankowska, Christiane Westenhöfer, Daniele Nubile, Darko Markovic, Davide Dave Fumi, Denise De Stena, Deniss Jershov, Dita Čudare, Elisa Scardoni, Enrico Elefante, Estelle Crochu, Evelina Kvartunaite, Gabriela Salgado, Gabriella Civico, Giséle Evrard Markovic, Gry Nesse, Hans-Georg Wicke, Heiki Viisimaa, Igor Spetič, Ilaria Mardocco, Ildikó Gulácsi, Imre Töviskes, José Carlos Matos Martins, Judit Lantai, Karin Persdotter, Karmen Murn, Laura Liachovič, Lenka Havrdová, Lidia Greco, Mafalda Morganti, Manfred Zentner, Mara Arvai, Marietta Balazs, Mark Taylor, Matija Blaće, Meta Brečić-Ločičnik, Michala Velingerová, Michelangelo Belletti, Milena Butt-Posnik, Milos Popic Svitac, Nerijus Kriauciunas, Neslihan Noyan, Nik Paddison, Nikolina Garaca, Óli Örn Atlason, Paul Kloostermann, Pauline Boivin, Petra Jazbec, Rita Bergstein, Roberta Lanzalaco, Ronja Höfers, Salvi Greco, Sara Bertoli, Sari Höylä, Sergio Andrea Rilievo, Sérgio Gonçalves, Simona Molari, Snezana Badlija Knoch, Stanislavs Babins, Suzanne Kavanagh, Tanya Basarab, Valerija Posavec, Virginia Hernandez, Vojislava Tomic, Yunus Denizli, Ziga Magjar.

Ռազմավարությունը մշակվել է @ JUGEND für Europa ՍԱԼՏՈ վերապատրաստման և համագործակցության ռեսուրսայի կենտրոնից Քրիստինա Պերնիցի, Հ. Էդա Բակրիր և Հանս-Գեորգ Վիկեի կողմից՝ Եվրոպական հանձնաժողովի EAC/B3 (Կրթություն և մշակույթ) բաժնի գործընկերների աջակցությամբ:

Youthpass

Խմբագրական տեղեկություններ

Հրատարակել է՝
JUGEND für Europa/ՍԱԼՏՈ վերապատրաստման և համագործակցության ռեսուրսային կենտրոնի կողմից. Գոդեսբերգեր պողոտա 142 – 148, 53175 Բոն, Գերմանիա
→ www.salto-youth.net

Հրատարակման համար պատասխանատու՝
Hans-Georg Wicke

Հրատարակումը համակարգել է՝
Kristiina Pernits, pernits@jfemail.de

Սրբագրում՝
Karin Walker, Bonn

Նկարազարդումներ և դասավորություն՝
Jörg and Mandy Krühne, → www.kreativraum.de
Պատկերի աղբյուր, → www.unsplash.de

Օրինական ներկայացուցիչ՝
IJAB՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջազգային երիտասարդական ծառայություն

Ռազմավարությունը հրապարակվել է 2021 թվականի օգոստոսին:
Այս հրատարակումը համաֆինանսավորվել է Եվրոպական միության Էրազմուս+ և Եվրոպական համերաշխության կորպուսի ծրագրերով: Եվրոպական հանձնաժողովը պատասխանատվություն չի կրում այս հրատարակման մեջ պարունակվող տեղեկությունների ցանկացած տեսակի օգտագործման համար:

ՍԱԼՏՈ վերապատրաստման և համագործակցության ռեսուրսային կենտրոնը գտնվում է JUGEND für Europa-ում, որը գործում է Ընտանեկան հարցերի, տարեց քաղաքացիների, կանանց և երիտասարդների գործերով դաշնային նախարարության (BMFSFJ) և Եվրոպական հանձնաժողովի անունից:

Հայերեն թարգմանություն

Այս հրապարակումը համաֆինանսավորվել է Եվրոպական միության կողմից: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «ԵՄ-ն հանուն երիտասարդների. երիտասարդության զբաղվածություն և ձեռներեցություն» ծրագիրը և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Թարգմանությունը՝

Բելլա Մխիթարյանի

Սրբագրումը՝

Արփինե Դավոյանի

Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

JUGEND
für Europa

Bundesministerium
für Familie, Senioren, Frauen
und Jugend

CPVA
Central project
management
agency

MINISTRY
OF FOREIGN AFFAIRS
REPUBLIC OF LITHUANIA

LTAID

SALTO
EASTERN EUROPE
& CAUCASUS

9 783912 480108